ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2022 **թ**. **դեկտեմբերի** 19-**ին** տեղի ունեցած թիվ 4 նիստի

ՀՀ, ք. Երևան 19.12.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թ. դեկտեմբերի 19-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 4 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 88 անդամներից 67-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Հաղորդում ԵՊՀ զարգացման 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին (զեկ.՝ ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Մ. Հովհաննիսյան):
2. Հաղորդում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թ. համախմբված եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին (զեկ.՝ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Ս. Գալստյան):
3. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2021-2022 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ա. Մակարյան):
4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արտաքին կապերի բաժինը լուծարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում (զեկ.՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ա. Մակարյան):
5. ԵՊՀ պատմության ֆակուլտետում «Վրացագիտության կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում (զեկ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Է. Մինասյան):
6. «ԵՊՀ հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու, «Մարքեթինգի բաժին» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում (զեկ.՝ ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Մ. Հովհաննիսյան):

7. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ու ֆիզիկայի ֆակուլտետների միաձուլման ու վերակազմավորման եղանակով «ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտ» ստորաբաժանման վերակազմակերպման վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
8. ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող *«Journal of Sociology. Bulletin of Yerevan University»* (խմբ.՝ Արթուր Աթանեսյան), *«Journal of Political Science. Bulletin of Yerevan University»* (խմբ.՝ Աշոտ Ալեքսանյան), *«Translation Studies: Theory and Practice»* (խմբ.՝ Ռուզաննա Ղազարյան), *«Արդի հոգեբանություն»* (խմբ.՝ Հրանտ Ավանեսյան), *«Կրթությունը 21-րդ դարում»* (խմբ.՝ Նազիկ Հարությունյան), *«Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»* (խմբ.՝ Գեղամ Պետրոսյան), *«Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն»* (խմբ.՝ Կառլեն Խաչատրյան), *«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում»* (խմբ.՝ Ելենա Երզնկյան) հանդեսները հրատարակության երաշխավորելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
9. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.դ. Գեղամ Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ.» (գիրք 1) մենագրությունը հրատարակության երաշխավորելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
10. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Վարդան Ոսկանյանի և նույն ամբիոնի դոցենտ Թերեզա Ամրյանի «Քրդերենի դասագիրք» (կուրմանջի հատ. 1) բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
11. Բարերար, աշխարհում խաղաղության օրակարգի առաջմղման ջատագով Աբդ ալ-Ազիզ Սաուդ ալ-Բաբտեյնին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյան):
12. «Խառը ուսուցման (էլեկտրոնային հարթակի օգտագործմամբ) մոդելի կիրառումը Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնական գործընթացում» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, պ.գ.թ., դոցենտ Ժակ Մանուկյան):
13. Ընթացիկ հարցեր

Նախքան նիստի օրակարգի հաստատումը ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ձևավորված ավանդույթի համաձայն, պարգևատրեց «ICPC» միջազգային ուսանողական ծրագրավորման օլիմպիադայի մասնակից ուսանողներին, որոնք ներկայացրել են ԵՊՀ-ն և գրանցել բարձր արդյունքներ: Այնուհետև Հ. Հով-հաննիսյանն ասաց, որ Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակի վերաբերյալ հայտարարություն կազմելու համար ստեղծվել է աշխատանքային հանձնաժողով, որն էլ հայտարարությունը կներկայացնի ԳԽ հաստատմանը:

1.**Հաղորդում ԵՊՀ զարգացման** 2021-2026 **թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին**:

Նիստի օրակարգի հաստատումից հետո ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Միքայել Հովհաննիսյանը հաղորդեց «ԵՊՀ զարգացման 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրի» կատարման ընթացքի մասին՝ ներկայացնելով ինչպես անցնող տարվա ընթացքում կատարված գործողություններն ու ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում արձանագրած ձեռքբերումները, այնպես էլ հետագա գործողությունների պլանավորմանն ուղղված աշխատանքները:

2. **Հաղորդում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի** 2023 **թ. համախմբված եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին**:

Հաջորդիվ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տիգրան Գալստյանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2023 թ. համախմբված եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ հավաստելով, որ ԵՊՀ 2023 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը դեֆիցիտային է, իսկ դեֆիցիտի լրացման աղբյուրը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարիների ընթացքում կուտակված դրամական միջոցների մնացորդն է:

3. **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը** 2021-2022 **ուստարվա գործունեության մասին**:

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանը ներկայացրեց մասնաճյուղի 2021-2022 ուստարվա հաշվետությունը: Նա նշեց, որ մասնաճյուղը, ամփոփելով «2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի» արդյունքները, 2021 թ. սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին մշակել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը»:

Ա. Մակարյանը վկայեց, որ աշխատանքային խումբը 2022 թ. հունվար-մարտ ամիսներին մշակել է ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց, որի հիման վրա կազմակերպվել է մասնաճյուղի ստորաբաժանումների ու ուսանողական կառույցների գործունեությունը:

4. **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արտաքին կապերի բաժինը լուծարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում**:

Հաջորդիվ Ա. Մակարյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արտաքին կապերի բաժինը լուծարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու հարցը: Ինչպես նշեց Ա. Մակարյանը, աշխատանքների կազմակերպման արդյունավետության պահանջի, ֆինանսական նպատակահարմարության, ինչպես նաև բաժնի ու մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների կրկնությունների բացառման անհրաժեշտության տեսանկյունից առավել նպատակահարմար է դիտարկել բաժնի լուծարման հարցը: ԳԽ-ն հաստատեց ներկայացված առաջարկը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

դիմել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ գիտական խորհրդի՝ Իջևանի մասնաճյուղի արտաքին կապերի բաժինը լուծարելու որոշումը հաստատելու միջնորդությամբ:

5. **ԵՊՀ պատմության ֆակուլտետում «Վրացագիտության կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում:**

Անցնելով օրակարգային հաջորդ հարցին՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ պատմության ֆակուլտետում «Վրացագիտության կենտրոն» ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու հարցը՝ նշելով, որ ՀՀ-ում հայագիտության՝ որպես գերակա ուղղության համակողմանի զարգացումն ու ներգրավումը միջազգային գիտական միջավայրում հնարավոր չեն առանց տարածաշրջանային, այդ թվում՝ վրացագիտության համալիր հետազոտությունների: Է. Մինասյանի հավաստմամբ կենտրոնի ստեղծումը պայմանավորված է աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական արագընթաց փոփոխությունների համատեքստում տարածաշրջանի երկրների տեղի, դերի, նշանակության, զարգացումների ընթացքի, հեռանկարների ու միտումների, գիտաքաղաքական գնահատման ու գալիք մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ: ԳԽ-ն հավանություն տվեց ներկայացված առաջարկին: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

դիմել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ գիտական խորհրդի՝ պատմության ֆակուլտետում «Վրացագիտության կենտրոն» ստեղծելու վերաբերյալ որոշումը հաստատելու միջնորդությամբ:

6. **«ԵՊՀ հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու, «Մարքեթինգի բաժին» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում:**

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ պրոռեկտոր Մ. Հովհաննիսյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց «ԵՊՀ հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու, «Մարքեթինգի բաժին» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու նախագիծը:

Պրոռեկտորի խոսքով ԵՊՀ հանրային կապերի և մարքեթինգի վարչության լուծարման ու նոր բաժնի ստեղծման առանցքային և գլխավոր դրդապատճառներից են կրթական ու գիտահետազոտական ծառայությունների շուկայում ԵՊՀ ճիշտ դիրքավորվելու անհրաժեշտությունը, այդ ծառայությունների լայնածավալ ու թիրախավորված հանրայնացումը, դրա շնորհիվ՝ ԵՊՀ հանրային նշանակության բարձրացումը և ԵՊՀ բրենդի դիրքավորումը համանման ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարքում: ԳԽ-ն հաստատեց նաև այս նախագիծը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

դիմել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ գիտական խորհրդի՝ Հանրային կապերի և մարքեթինգի վարչությունը լուծարելու որոշումը հաստատելու միջնորդությամբ:

7. **ԵՊՀ ռադիոֆիզիկայի ու ֆիզիկայի ֆակուլտետների միաձուլման ու վերակազ-մավորման եղանակով «ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտ» ստորաբաժանման վերակազմակերպման վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկության ներկայացում**:

Հաջորդիվ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը ներկայացրեց ԵՊՀ ռադիոֆիզիկայի ու ֆիզիկայի ֆակուլտետների միաձուլման ու վերակազմավորման եղանակով «ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտ» ստորաբաժանման վերակազմակերպման վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու հարցը:

Ինչպես նշեց Հ. Հովհաննիսյանը, ստեղծվող ինստիտուտում գործելու է գիտահետազոտական մեկ ինստիտուտ, իսկ կրթական ծրագրերն ամբողջությամբ վերանայվելու են՝ դրանք դարձնելով առավել արդիական, ճկուն և ներկայիս ու ապագա մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ լուծումներ առաջարկող:

ԵՊՀ ռեկտորը հավաստեց, որ ֆակուլտետները միավորելու և նոր ստորաբաժանում ստեղծելու որոշումը երկարատև քննարկումների ու բազմապիսի վերլուծությունների արդյունք է: Երկու ֆակուլտետում ներկայումս գործող կրթական ութ ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց միջև առկա են հստակ կապ ու համագործակցային լայն հնարավորություններ, սակայն միասնական հարթակի բացակայության պատճառով դրանք լիարժեք չեն օգտագործվում: «Վերակազմակերպման արդյունքում մենք ակնկալում ենք ունենալ այդ հարթակը և նպաստել, որ այս ոլորտում բազմաթիվ տարիների ընթացքում գեներացված գիտական միտքը, հետազոտական ավանդույթներն ու մշակույթը ներառվեն կրթական ծրագրերում՝ հենց լսարանում հասանելի դառնալով ուսանողներին և խթանելով նրանց ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում: Մեր համոզմամբ կրթական ծրագրերը պետք է լինեն ճկուն և ուսանողակենտրոն, ուստի կրթական նոր ծրագրերի առարկայացանկը պետք է համապատասխանեցվի միջազգային չափորոշիչներին, իսկ դասընթացների կրեդիտները ճանաչելի լինեն արտասահմանյան բուհերի կողմից՝ հնարավորություն տալով ուսանողներին մասնակցելու շարժունության տարբեր ծրագրերի՝ առանց արհեստական խոչընդոտների»,– հավելեց ԵՊՀ ռեկտորը:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 66, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0): ԳԽ-ն հաստատեց ներկայացված առաջարկը:

Որոշվեց.

դիմել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ գիտական խորհրդի՝ ռադիոֆիզիկայի ու ֆիզիկայի ֆակուլտետների միաձուլման ու վերակազմավորման եղանակով «ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտ» ստորաբաժանման վերակազմակերպման վերաբերյալ որոշումը հաստատելու միջնորդությամբ:

8.ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող *«Journal of Sociology. Bulletin of Yerevan University»* **(խմբ.՝ Արթուր Աթանեսյան)**, *«Journal of Political Science. Bulletin of Yerevan University»* **(խմբ.՝ Աշոտ Ալեքսանյան)**, *«Translation Studies: Theory and Practice»* **(խմբ.՝ Ռուզաննա Ղազարյան)**, ***«Արդի հոգեբանություն»*** **(խմբ.՝ Հրանտ Ավանեսյան)**, ***«Կրթությունը 21-րդ դարում»*** **(խմբ.՝ Նազիկ Հարությունյան)**, ***«Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»*** **(խմբ.՝ Գեղամ Պետրոսյան)**, ***«Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն»*** **(խմբ.՝ Կառլեն Խաչատրյան)**, ***«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում»*** **(խմբ.՝ Ելենա Երզնկյան) հանդեսները հրատարակության երաշխավորելու հարցը**:

Օրակարգային հարցերի շրջանակում ԵՊՀ գիտական խորհուրդը հրատարակության երաշխավորեց ԵՊՀ հրատարակչության առաջադրած

չափորոշիչներին լիովին համապատասխանող «Journal of Sociology. Bulletin of Yerevan University», «Journal of Political Science. Bulletin of Yerevan University», «Translation Studies: Theory and Practice», «Արդի հոգեբանություն», «Կրթությունը 21-րդ դարում», «Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» հանդեսները: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել վերոնշյալ հանդեսները:

9.**ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան**, **պ.գ.դ. Գեղամ Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը** 1918-1920 **թթ.»** (**գիրք** 1) **մենագրությունը հրատարակության երաշխավորելու հարցը**:

ԳԽ-ն հրատարակության երաշխավորեց նաև ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.դ. Գեղամ Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ.» (գիրք 1) մենագրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել Գ. Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 **թթ.»** (**գիրք** 1) **մենագրությունը**:

10.**ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ**, **բ.գ.թ.**, **պրոֆեսոր Վարդան Ոսկանյանի և նույն ամբիոնի դոցենտ Թերեզա Ամրյանի «Քրդերենի դասագիրք» (կուրմանջի հատ.** 1) **բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը**:

ԳԽ-ն հաստատեց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Վարդան Ոսկանյանի և նույն ամբիոնի դոցենտ Թերեզա Ամրյանի «Քրդերենի դասագիրք» (կուրմանջի հատ. 1) բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել Վարդան Ոսկանյանի և դոցենտ Թերեզա Ամրյանի «Քրդերենի դասագիրք» (կուրմանջի հատ. 1) **բուհական դասագիրքը և**

միջնորդություն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ հաստատելու աշխատությունը որպես բուհական դասագիրք:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

11. **Բարերար, աշխարհում խաղաղության օրակարգի առաջմղման ջատագով Աբդ ալ-Ազիզ Սաուդ ալ-Բաբտեյնին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու հարցը**:

Ընթացիկ հարցերի շրջանակում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց բարերար, աշխարհում խաղաղության օրակարգի առաջմղման ջատագով Աբդ ալ-Ազիզ Սաուդ ալ-Բաբտեյնին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու առաջարկությունը: Աբդ ալ-Ազիզ Սաուդ ալ-Բաբտեյնը երկար տարիներ ակտիվորեն համագործակցում է ֆակուլտետի հետ, տրամադրում տարբեր դրամաշնորհներ՝ աջակցելով մասնագիտական գործունեության արդյունավետ կազմակերպմանը: Ռ. Մելքոնյանի հավաստմամբ նրա անունն են կրում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի տարբեր համալսարանների արաբական մշակույթի ամբիոններ, այդ թվում՝ Օքսֆորդի համալսարանի արաբերենի ամենահին ամբիոնը: ԳԽ-ն հաստատեց ներկայացված առաջարկը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

Աբդ ալ-Ազիզ Սաուդ ալ-Բաբտեյնին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

12.**«Խառը ուսուցման (էլեկտրոնային հարթակի օգտագործմամբ) մոդելի կիրառումը միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնական գործընթացում»:**

Օրակարգային վերջին հարցով ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Ժակ Մանուկյանը հանդես եկավ «Խառը ուսուցման (էլեկտրոնային հարթակի օգտագործմամբ) մոդելի կիրառումը միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնական գործընթացում» խորագրով զեկուցմամբ:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան